ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ծ-2020/01

ք.Երևան 09. 01. 2020թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գործադիր տնօրեն Գ. Խումարյանի, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանին, ով գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագայում համատեղ հիշատակվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ «Պայմանագիր» հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուն պատվիրում և վճարում է, իսկ Կատարողը պարտավորվում իրականացնել Պատվիրատուին պատկանող Լայնաշերտ FM 4 Dipole համակարգի երկու ալեցիրների տեղակայման աշխատանքներ Երևան քաղաքի հեռուստաշտարակի 130 մ-ի վրա, ինչպես նաև բարձր հաճախականության կոաքսիալ երկու մալուխների՝ ալեցիրներից դեպի հեռարձակիչներ, անկացման աշխատանքներ, այսուհետ՝ «Ծառայություն»:

2. Ծառայությունների մատուցման ժամկետը և հանձնման կարգը

2.1.Պայմանագրի 1.2. կետով սահմանված Ծառայության մատուցման ժամկետ է սահմանվում 15 (տասնհինգ) աշխատանքային օր հաշված Պայմանագրի ամսաթվից:

2.2.Ծառայությունը համարվում է մատուցված Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

3. Կողմերի պարտականությունները

3.1. Կատարողը պարտավոր է.

3.1.1.Ծառայությունը մատուցել պատշաճ, տեխնիկական բարձր որակով:

3.1.2.Ծառայությունը մատուցել Պայմանգրի 2.1. կետով սահմանված ժամկետում:

3.1.3. Պատվիրատուի պահանջով տեղեկություններ հաղորդել Ծառայության մատուցման ընթացքի մասին:

3.2.Պատվիրատուն պարտավոր է.

3.2.1. Սարքավորումները Կատարողին հանձնել դրանց տեղադրման վայրում:

3.2.2. Վճարել Պայմանագրի 4-րդ բաժնում սահմանված չափով և կարգով:

4. Պայմանագրի գինը եվ վճարման կարգը

4.1.Պայմանագրով նախատեսված Ծառայության գինը կազմում է 600 000 (վեց հարյուր հազար) դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

4.2.Վճարումը կատարվում է 2.2. կետով Ծառայության մատուցմանը և հարկային հաշվի դուրսգրմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, գումարը Կատարողի հաշվին փոխանցելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս-մաժոր)

Կողմերն ազատվում են Պայմանագրի կատարման պատասխանատվությունից, եթե դրանց չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է արտակարգ և անկանխելի հանգամանքների (պատերազմական գործողություններ, երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհ և այլն), ինչպես նաև Կողմերից մեկի Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրության փոփոխությունների և նորմատիվ ակտերի հրապարակման դեպքում: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

8. Այլ դրույթներ

8.1.Անհրաժեշտության դեպքում, Կողմերի համաձայնությամբ Պայմանագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

8.2. Սարքավորումների հետագա սպասարկումը Պայմանագրի առարկա չէ և ենթակա է իրականացման այլ պայմանագրի հիման վրա:

8.3. Պայմանագրի վերաբերյալ կամ նրա շուրջն առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում Կողմերը վիճելի հարցերը կարգավորում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.4. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
ք. Երևան,Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ՝ 220553334321000	Հ/h 1570027609970100
ՀՎՀՀ՝ 01541435	ՀՎՀՀ 01501898
Պատվիրատուի կողմից	Կատարողի կողմից
_____ ***Գ. Խումարյան***	_____ ***Մ. Միլիտոնյան***